



ՀԱՅԲԱՐԱՅԻՆ ԲԱՐՈՒՆԻՍ

ԱՐԱՐԱՅԻՆ ԲԱՐՈՒՆԻՍ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 151

13 ՅՈՒՆԻՍ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ՏՕՒԱՑՈՅՑ

Յունիս 14	†	Կիր.	դկ.	Բ. Զկնի Հոգեգայտեան:
15		Բշ.	աձ.	Սրբոյն Յովհաննու Կարապետին եւ Ա- բանապինեայ եպիսկոպոսին: Եւ սրբոց մանկանցն Բեքդեհեմի եւ Ակակիոսի վկային:
16		Գշ.	ակ.	Սրբոց Կուսանացն Նունեայ եւ Ման- եայ:
17		Դշ.	բձ.	Պահոց:
18		Եշ.	բկ.	Ս. Եղիփանու Կիպրացւոյ Հայրապե- տին:
19		Ուր.	գձ.	Պահոց:
20		Շք.	գկ.	Սրբոյն Մովկիմայ եւ Կողբատոսի զի- նաւորին: Եւ Սրբոցն Սարգսի եւ Բազոսի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՔԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Զորրորդ տարի ① 13 Յունիս 1914 ① Թիւ 151

«Սրբազան Բանաձայագեսն Պիոս Ժ. կր մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթ. Մէրի ձէլ Վալի, առ Ա.Ա.ՆՆ. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Բ. Թեոքեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, քնդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ԱԿՁԲՈՒՆՔՆԵՐ

ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Դ.

Մեր յարգելի ընդդիմախօսը կը շարունակէ հարցնել. «Վերջապէս ո՞ւր պիտի դնենք Պիոս իններորդը՝ որ Բիէլլոօ Տար-պուլէ»ի պէս արիւնհուշտ մարդը սուրբ հաս-տատած է»:

Պիոս Թ. ազնուական ցեղէ՝ անբասիր, բարեսիրտ, աղքատասէր, հոգեւոր Բահանա-յապետ մըն է եղած, գերազանցօրէն հա-մակրելի, տիպար համեստութեան և մաք-րակրօն եկեղեցականութեան: Իր հոգւոյն գեղեցկութիւնը ուղիղ կը համեմատէր իր արտաքին վեհութեան և դիմաց հրապուրին

հետ: Զինքը մօտէն ճանչցողները կոչած են զայն «l'angelico Pio Nono, հրեշտակայինն Պիոս Իններորդ»:

Զայն բաւական խիստ կերպիւ դատող պատմագիր մը իսկ, Մոն-զալամպէրի կենսագրութեան սրամիտ ու նրբաճաշակ հեղինակն, Հայր Լըզանիւէ «Յոյժ սիրելի» տիտղոսով կը մեծարէ զայն առաջի Պատմութեան:

Անկարելի չէ բնաւ թէ օր մը խորաննե-րու վրայ յարգուած տեսնենք զայն, քանզի բարոյական և աստուածաբանական առա-քինութիւններն ի գործ դրած է հաւանօ-րէն մինչև ի գիւցազնութիւն, և զի մանա-ւանդ ի կենդանութեան և յետ մահուան հրաշքներ գործած է, որոց վկաներն ար-ժանի են ամէն վստահութեան:

Անարատ Յղութեան պաշտպան և յայ-տարարիչ Բահանայապետն ստուգիւ «անա-րատ» հոգի մըն էր, եղականօրէն ջերմե-

ռանդն Ամենա . Կուսին , հրեշտակաց Թա-
գուհւոյն , անստեղծ սրբութեան Մօր և ա-
ղախնոյն : Ինչ զարմանք ուրեմն եթէ ամե-
նօրհեալ Տիրուհին զինքն այնչափ սիրող և
փառաւորող և ամէն առաքինութիւններով
զարդարեալ Քահանայապետ մը հաճի խո-
րաններու պատուոյն բարձրացնել մի օր : Եւ
ո՛վ գիտէ , իր այժմեայ թշնամիք իսկ լու-
սաւորուած և զինաթափ եղած խոնարհու-
թիւն ունենան թերեւս ի ծունր իջնելու
յայտամ իր սրբաշուք պատկերին առջև , և
խնդրելու իրենց անձին և սիրելեաց ինպատ-
հօք բարեխօսութիւնը նորապսակ Երանել-
ւոյն :

Այս ամենայն կարելի է անշուշտ . բայց
թէ նա «արիւնոռչտ մարդ մը սուրբ հա-
տատած» լինի , ահա մեծ անկարելին . . .
Եւ մինք առաջին անգամ Բանբերէ կը լսենք
այս իրօք «անհեթեթ և խելքի՛ դէմ» լուրը :
Կը խնդրենք բազմահոգւոյ յօդուածագրէն որ
հաճի մեզ ըսել թէ ո՛վ է այս Բիէգրօ Տար-
պուէսը , ո՛ւր ապրած , ի՞նչ ըրած է և ե՞րբ
սուրբ հաստատուած է Պիոս Թ . ի կողմանէ :

Խնդիրն իր կարծածէն շատ աւելի ծան-
րակշիռ է , և եթէ Բանբեր անճաշակ ու
վատահամբաւիչ ծաղրաթերթի մը փոխուե-
լու փառասիրութիւնը չունի , ու կը սիրէ
ընդհակառակն լուրջ օրաթերթի մը գէթ ե-
րեւոյթները պահել , բազմալի է որ պատաս-
խանէ մեր այս հարցմանց . և յետոյ մինք
ևս մէկ քանի փոքրիկ ըսելիքներ ունինք ,
որոնք թերեւս բոլորովին անօգուտ չլինին ի-
րեն և իր յարգելի ընթերցողաց ¹ :

* *

Անցնինք ուրիշ կարեւոր կէտերու : Վըս-
տահութեամբ մը որ մեզ զարմանք կը պատ-
ճառէ՝ Բանբերի յօդուածագիրը կը վճռէ թէ
անսխալութեան վարդապետութիւնն «ան-
հեթեթութիւն» մըն է ու «նոր և խելքի
դէմ հաւատալիք» մը : Հեթանոսներու հա-
մար , Նոր-Դաւիթոսիոյ մարդակերներուն և

¹ Դժբախտաբար Բանբեր դադարած է , ինչպէս
կ'երեւի , ի սպառ : Ծ . Ի .]

Ջամպէզի սեւամորթներուն համար կրնայ
գուցէ այսպէս համարուիլ : Բայց մարդ մը
որ քրիստոնեայ է , մարդ մը որ կը հաւա-
տայ Ս . Գրոց , Աւետարանի , մարդ մը որ կը
հաւատայ Եկեղեցւոյ և Տիեզերական Ժո-
ղովներու անսխալութեան , ի՞նչպէս կրնայ
«անհեղեղ» կոչել այսպիսի լուսաւոր և աստ-
ուածային վարդապետութիւն մը :

Միթէ Ս . Գրք , Աւետարան , Գործք ու
Թուղթք Առաքելոց մարդիկ չեն զրած . ան-
շուշտ Հոգւոյն Սրբոյ ներշնչութեամբ , բայց
վերջապէս տեսանելի հեղինակները մահկա-
նացուներ չէին միթէ . ի՞նչպէս կրցան ան-
սխալ գրել և ուսուցանել :— Աստուածային
զօրութեամբ , կը պատասխանէք :— Շատ
լա՛ւ : Տիեզերական Ժողովներու անդամք
հրեշտակներն էին միթէ :— Ո՛չ , այլ մար-
դիկ :— Իրենց վճիռները հաւատոյ մասին՝
սխալակա՞ն են թէ անսխալ :— Անսխալ :—
Բայց ի՞նչպէս , միթէ մարդիկ կրնա՞ն խօսիլ
ու գրել անսխալ կերպիւ :— Այո՛ , կը պա-
տասխանէք , Աստուծոյ ամենակարող զօրու-
թեամբ :— Ուրեմն «անհեղեղութիւն» չկա՞յ
մինչև հոս :— Բնաւ ամենեւին :— Հաստատա-
պէս կ'ընդունէ՞ք թէ ՄԱՐԴ կրնայ ԱՆՍԽԱԼ
լինել աստուածային զօրութեամբ :— Ան-
շուշտ :— Ահա ճշգիւ այս է Քահանայա-
պետին պարագան . ո՛վ ըսաւ երբեք թէ
Պապն անսխալ է մարդկային զօրութեամբ :
Անսխալութիւնն առանձնաշնորհում մըն է
զոր Աստուած կը պարգեւէ նմա ո՛չ ի փառս
իր անձին , այլ ի փառս Ս . Եկեղեցւոյ և
յօդուտ հաւատացելոց :

Դուք՝ Սրբազան Մատենագիրները , Տիե-
զերական Ժողովոյ Հայրապետներն անսխալ
գաւանդով , անհեղեղութիւն մը չէք գոր-
ծեր . իսկ մենք Ս . Քահանայապետին ան-
սխալութիւնը ընդունելով , ինչո՞ւ անհեղե-
ղութեամբ կ'ամբաստանուինք . . . դեռ չէ՞ք
տեսներ թէ ո՛ր կողմն են հակասութիւն ,
անհեղեղութիւն՝ միացեալ յայտնի անիրա-
ւութեան հետ : Եւ յետոյ ի՞նչու չէք խոր-
հիր թէ ո՛ւր որ «անհեղեղութիւն» կը նըշ-
մարէք դուք , անթիւ գիտուններ՝ ամէն ցե-
ղէ և ամէն երկրէ , ուղիղ և տրամաբան

միտքեր, լայնախոհ հանճարներ, կրօնի հար-
ցերով զբաղող ամենալուրջ գլուխներ ուղ-
ղութիւն, ստուգութիւն և ճշմարտութիւն
եւթ տեսած են ու կը տեսնեն: Ձեզ կը թո-
ղում դատել թէ ո՞վ է սխալողն, զո՞ւք թէ
անոնք: Եթէ պնդէք թէ անոնք... զձեզ
կը խաբէք անշուշտ, ու ձեր անձին կը վե-
րագրէք առանձնաշնորհում մը որոյ առջեւ
միանգամ խոնարհիլ աւելի դժուար է քան
բիւր անգամ Բահանայապետին անսխալու-
թեան առջև:

Ու կը համարձակիք գրել «նոր», առանց
մտածելու թէ քրիստոնէութեան չափ հին է
այս վարդապետութիւնը: Եթէ Աստուածա-
բանութեան համետ դասագիրք մը ձեռք
առնուիք, և գրելէ առաջ քիչ մը ուսում
ըրած ըլլալիք այս նիւթերուն վրայ: պիտի
տեսնէիք թէ Աստուածաշունչ, Տիեզերական
Ժողովք ու Սուրբ Հարք և Վարդապետք ա-
ռաւել կամ նուազ բայցայայտ ուսուցած և
քարոզած են զայս: Ս. Երանոս, Ս. Լեւոն
Մեծ, Ս. Օգոստինոս, Ս. Գրիգոր Նազիւն-
զացի, Ս. Հերոնիմոս, Ս. Փլաբիանոս, Ս.
Մաքսիմոս, Ս. Թէոփոր Ստուդիան, Ս. Պե-
տրոս Ոսկեխօս, Իննովկենտիոս Ա., Դիոնի-
սիոս Ալեքսանդրացի, Պելլարմինոս և այլք
իրենց վեհ ձայներով պատրաստեցին դարե-
րու ընթացքին մէջ Վատիկանու Ժողովին
պաշտօնական և անդառնալի յայտարարու-
թիւնը: Ի մէջ այլոց լսեցէք նոյն խել Կալի-
զան աստուածաբանի մը, Դուռնէլիի պայ-
ծառ խոստովանութիւնը. «Պէտք չէ ծածկել
թէ դժուար է՝ այնչափ առատապէզ վկա-
յութեանց մէջ զոր կը ժողվեն Պելլարմինոս
եւ այլք՝ չճանչնալ Առաքելական Աթոռին,
այսինքն Հռովմէական եկեղեցւոյ ստոյգ և
ԱՆՍԻՍԼ հեղինակութիւնը¹»:

Տասնեւիններորդ դարու մէջ Օքսֆորտի
համալսարանին ամենէն մաքուր և չքնաղ

փառքը, Անգլիոյ ամենէն վսեմ հոգիներէն
և ամենէն պերճիմաստ հանճարներէն մին,
Հէնրի Նիւմըն, 1874ին սքանչելի գրու-
թեամբ մը ընդգէմ Կլատտիոնի՝ կը պաշտ-
պանէր Վատիկանու Ժողովին յայտարարու-
թիւնը, և ցոյց կու տար քաղաքակիրթ աշ-
խարհի թէ ի՞նչպէս Հաւատք, Գիտութիւն,
Հանճար և Սրբութիւն՝ հրաշալի ներդաշ-
նակութեամբ՝ կը միանան ստէպ ի ծոց Բրիտ-
տոսահինն եկեղեցւոյ: ¹ (Արդեօք Բանբերի
քանի՞ հայ կաթողիկէները պէտք են մի միակ
Նիւմըն կազմելու համար):

Տիեզերապէս յարգուած ու սիրուած անձ-
նաւորութիւն մը, աննման իր նկարագրի
վեհութեամբ և իմացական զօրութեամբ, ար-
ծիւն Միացեալ-Նահանգաց, ծիրանաւոր Կիպ-
պընս «Մեր Հարց Հաւատք» տիտղոսով ան-
մահ երկատիրութեան մը մէջ կը պաշտպանէ
Ս. Բահանայապետին անսխալութիւնը՝ բա-
նականութեան, Ս. Գրոց, հին Հարց վար-
դապետութեան ըստ ամենայնի համաձայն
գտնելով և փառաւորելով զայն:

Աւասիկ թէ ի՞նչպէս «նոր և խելքի դէմ»
է Անսխալութեան սկզբունքն. արդեօք դեռ
ի՞նչ կը պակսի որպէս զի «հին և խելքի հա-
մաձայն» կոչուի այն:

*
* *

Անտարակոյս կրօնքի մէջ խորհուրդներ
(mystères) կան, և ընդունիլ զայնս դիւրին
չէ. անհրաժեշտ է ունենալ Աստուծոյ գեր-
բնական շնորհքը: Բայց աշխարհի մէջ խոր-
հուրդ մը կայ որոյ առջեւ աւելի կը շփո-
թինք, կը տրտմինք ու խորը չենք կրնար
թափանցել բնաւ, — այն է մարդկային կու-
րութեան խորհուրդը՝ որ սնոտի դժուարու-
թիւններ կը յարուցանէ երկնից դէմ. որ ա-
ռարկութիւններ եւեթ կը հաւաքէ լիարուան
եւ ամենէն ջախջախիչ պատասխաններուն
ըովէն կ'անցնի անփոյթ, որ չհաւատալի
յանդգնութեամբ կ'անգոսնէ գիտութիւն,

¹ «Non dissimulandum difficile esse in tanta
testimoniorum mole, quæ Bellarminus et alii conge-
runt, non recognoscere Apostolicæ Sedis, seu Ro-
manæ Ecclesiæ certam et infallibilem auctoritatem.»
Tournély, *De Romano Pontifice*, q. V. a. 3. տե՛ս
նաև Cardoni, *De Rom. Pont. Infallibilitate*.

¹ H. Newman, *Letter to the Duke of Norfolk*,
London.

² Cardinal Gibbons, *Faith of Our Fathers*, U.
S.—Baltimore.

տրամաբանութիւնն եւ ամէնէն հազուագիւտ արժանիքներ, որ կը կարծէ ճշմարտութենէ աւելի զօրաւոր ըլլալ, որ չ'ուզեք բնաւ անձնատուր ըլլալ ստուգութեան, չի հաճիր իր աչքերը բանալ տեսնելու համար, եւ որուն ամէնէն պայծառ իրողութիւններ աւելի ցատում եւ կատաղութիւն կը ներշնչեն... ինչպէս երբեմն չորեքօրեայ Ղազարու յարու-թիւնը՝ Հրէից:

ՎԱՆԱԿԱՆ

17 Մայիս 1914

ԶԱՎԱԼԼԸ ՄԱՐՏԻՐՈՍ

Ահ, մատամ, պու քէնարը էնի շաբա-նը սիզի բէք րահաթսըզ էտիյօր օլմալը, տէտիմ:

— Աման, պունտան հիչ պահս իթմէյին, միւսիւ: Տահա պու գատար միւղիճ վէ ինսանը եօրան պիր մօտա կէօրմէմիշիմ: Օ պիր կիւն պիր եօլնուլըզ իթմէք մէճպուրիյէթինս տէ պուլունըյօրտըմ... պէտպախթ շաբա-մըն էնի քէնարը հէր թարաֆա չարըյօրտը. էրքէքլէր ալթընտան կէչմէք իչլին էյիլմէյէ մէճպուր օլույօրլարտը... իքինճի մէվգի գօմարթիմանլարընտան պիրինէ օթուրտըմ, սէտիրին իւղէրինէ եէրլէշմէք գապիլ օլմա-տը... իսահ նա իսահ այագտա տիմ տիք տուրտում, հիչ պիր հարաքէթ իթմէքլիյիմ միւլմքին տէյիլտի... Սաղտա պաշըմը տա-յայանագ պիր եէրիմ վար իտի — ահ, օ իս-թինատկեանը տիւշիւնտիւշիւմտէ թիւլէրիմ իւրբէրիյօր—օրայա չարըլըպ տուրույօրտըմ: Սօլտա պիր էֆէնտի վար իտի քի պիր գօր-գու իլէ պանա պագըյօրտը, չիւնքի եա շաբ-գամըն սիւրի քէնարըյլա վէ եա շաբգա չի-շիմին ունուլա կէօղիւնիւ չըգարըրմ տէյէ գօրգույօրտը... եօլնուլուզ իւչ սաաթ տէ-վամ իթտի. իւչ սաաթ չէքմէտիյիմ էղիյէթ վէ մահնուպիյէթ գալմատը...:

Պու գատար զահմէթլէրին հիքեայէսինս տէն միւթէնսիր օլարագ, պիր ահ չէքէրէք տէտիմ:

— Զավալլը մարտիրոս:

* *

Քէնտիսինէ տէտիմ քի:

— Շու էօքչէսի եիւքսէք գունտուրա-նըղլա եիւրիւտիւշիւնիւզտէ թապի չօգ վահ-մէթ չէքիյօրսընըզ:

— Ալլահ աչղընա օլպուն պարի զահմէթ տէմէյին միւսիւ: Զահմէթինտէն վազ կէչ-տիք, տայիմի սուրէթտէ աղըր պիւր թէհլիքէ տիր... Տիւղիյէ չալըշմալընը քի ալաղլին տէօնմէսին... եօգսա անինաէ ալաղըն խո-րոպ օլուր: Անլայամայօրում քի պու կիւ-լիւնճ մօտայը նի'չին իճատ իթմիլլէր. պէլ-քի պօյուլմըղը ուզուն կէօսթէրմէք իչլին մի տիր աճէպա... Եանի պունսըզ պէնիմ պօ-յում զաթէն ուզուն տէյիլմիյտի... Օ պիր կիւն տօսթլարըմտան պիր մատամը կէօրմէյէ կիթմիշտիմ, մէրտիվէնտէն էնէրքէն էօքչէմ պիր գայը վէրինճէ, պանագլարըմ բարչա բարչա օլուր տէյէ գօրգտում... Մամաֆիյն պէն միւպալէղանը տէյիլիմ, կէօրիւյօրտու-նըզ, պէնիմ էօքչէլէրիմ պէշ սանթիմէթրօ եիւքսէքլիյինտէ տիր, հալպու քի էօթէտէ սէքիզ, տօղուզ սանթիմէթրօլըզլար վար տըր... Զանն իտէրսին քի գարըլար եա-վաշ եավաշ ճանպաղ ալաղըզլարը իւղէրինս տէ կէզմէք իսթէյօրլար... եաղըզ պիլիմ կիպի զավալլըլարա:

Պիղզաթ քէնտիմ տէ պունա ճիտտէն միւ-թէնսիւթ օլարագ, չիքեայէթինէ իշթիրաք իտէրէք, տէտիմ:

— Զավալլը մարտիրոս:

* *

Սէօղիւմէ տէվաւէն:

— Մատամ, հարաքէթլէրինիզտէ զայէթ սըզըլըյօրսընըզ կիպի կէօրիւյօրում, տէտիմ:

— Սըզըլմագ մը: Երլան պալըղը կիպի զըսգըվրագ զալմագ տէյին չունա: Հէր վա-գըթ չէքտիյիմիզ չու լանէթ մօտատան տըր: Շիմտի կէօյա հըֆօզ էս սըհէ նամընա, Բա-րիզ եախօտ Մօնբէլիէ տար իւլ ֆիւնուըն տօքթորը ֆիւլան վէ եախօտ գատըն տօք-թօրը ֆիւլան թարաֆընտան թաւսիյէ իտի-լէն վէ գօրսէ թապիր օլունան տէմիր խոլ-գա իչինտէ եաշամագ մէճպուրիյէթինտէ պու-լունըյօրըզ... օ գատար կիւճ պիր հալիմիզ վար տըր քի եէրէ պիր թօթլում տիւշէճէք

օլնա, ծնը գալորըմազ իշին եա պէտէմէյի, եա գօճամը վէ եախօտ էվլատլարմը չաղըր-
մալըլըմ... Պաղէն Չինլիէրին, միւճրիմէ-
րէ ճէզա վէրմէք իշին գուլլանտըզլարը ա-
լէթլէրտէն պահա օլունուր, հալպու քի շիմ-
տի պիզ օ ալէթի սիյասէթէ մահքիւմ օլմուշ
եաշայօրուզ...:

Պիչարէ գատընըն պու գատար աղըրլարը
պէնի տէ տիգգաթա կէթիրտիյինտէն, մէճ-
պուր օլտոււմ եինէ

— Զավալլը մարտիրոս, տէմէյէ:

Թէքրար տէվամ իթտիւմ վէ

— Մատա'մ, հիշ նէզլէ օլմայօրմըսընըզ,
տէտիւմ:

— Ահ, թապիի տիր քի պու սիւալընը-
ղըն սէպէպի տահա շու մէվսիմտէ պիլէ տան-
թէլա գուլլանմաղըղըմ տըր... էլպէթթէ
նէզլէ օլույօրոււմ, սօղուգ ալըյօրոււմ, էօք-
սիւրիւյօրոււմ... մօտա պէլասը տըր պու:
Պիզի գըզտըրաճազ սուրէթտէ էլպիսէ կի-
յինսէք օլմա'զ մը... Թամմ եաղըն օրթա-
սընտա պրօնշիթէ թութուլտոււմ, համտ օլ-
սուն աղըր պիր նէթիճէ վէրմէտի, ամմա,
պէն զահմէթ չէքտիւմ...:

Պու պիչարէ գատընըն չէքտիյի զահմէթ-
լէրին հագիգաթէն տայանըլըր շէյլէրտէն օլ-
մատըղընը կէօրէրէք. էլլէրիմի կէօլլէրէ տօղ-
րու գալորըրտըմ վէ

— Զավալլը մարտիրոս, տէտիւմ:

Թէնգիտաթմը իլէրի կէօթիւրէրէք,

— Շիւպէն եօգ տըր քի պու մօտա իգ-
թիզասընտան օլան շէյլէր սիզի չօգ մէշղուլ
իտէրլէր:

— Մէշղուլ մը իտէրլէր. էօմրիւմիւղիւ
պիթիրիւրլէր... պիր զէվալլը գարընըն հէր
քէսին կիյինտիյի րօպայը պուլապիլմէք իշին
տիւշիւնտիւշիւ սաաթլարը... կիւլիւնճ օլ-
մամազ իշին շարգասընը րօպասընա ուլտուր-
մագ իւզրէ սարֆ իթտիյի վազըթլարը... էլ-
պիսէ պիչտիրտիյինտէ... բրօվա իթտիյին-
տէ... Թէքրար թէքրար մօտիսթրանըն վէ
եախօտ տիքիճիսիյին եանընա կիտիպ կէլ-
տիյինտէ զայիպ իթտիյի սաաթլարը... պու

տիւանէ մօտա էլպիսէլէրինի պիրպիրինէ թէ-
վաֆուգ իթտիրմէք, վիզիթա րօպասը կի-
յինմէք, տալէթ էլպիսէսի կիյինմէք, ծնը
չըզարըպ սուարէ թագըմընը կիյինմէք, պուն-
լարը կէրի չըզարմազ իշին... լազըմ օլան
տագիգալարը պիր հիսապ էյլէյին... վէ իշթէ
կէօրէճէքսիւիզ քի շու պիզիւմ հայաթըմըզ
նէ կիպի քէշմէքէշլէր, զահմէթլէր, րէնճի-
տէլէր, էլինթիլէր իշինտէ կէշմէքտէ տիր:
Օ հալտէ արթըզ պիզիմքինէ հայաթ տէմէ-
մէլի, եա հայաթըն պիր թօրթուսը տէմէլի:
(Մապաւի վար)

ՀԻՆ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՑ ԻՒՅՄ

(1827 — 1830)

Հայածոււմուն պաշտանկընը

Իսամէսիմ սէնէսի 1827 Քեանոււնի էվլիլիմ
վէ հիմրէթի սէնէ 1243 Ճեմազիւլ ախր 13¹

Ելլըն սօն կիւնլէրինտէ Դեկտեմբեր Քեա-
նունի էվլէլ ալընտա Լիբանանլը Հայր Օ-
գոստինոս վրդպ. Հէքիմեան վէ Հայր Դա-
նիէլ վրդ. Համալ պաշը իյազարոսեան, Պէկ
Օղլունտա Քալաթա սարայըն իթթիսալիյինտէ
մէքթէպ աշմըշլարտը. կիւնիւն պիրինտէ ագ-
չամ իւսթիւ չրաքլար ատէթլէրինէ կէօրէ
տուա իտէրքէն, նիզամ ուսթասը Քէօր Ար-
թին ճիվար գօմշուսու, չօճուգլարըն սէսինի
իշիտիպ, զիեատէսի իլէ խըրսա չըգար տէմէ
իլէ, պունլար քիմլըն իզնի իլէ պունտա մէք-
թէպ աշմըշլար. էրթէ կիւն սէպահլէին ժա-
մակարգութիւն մէհէլի պիր ժամկոչ եօլլա-
յօր Հայր Օգոստինոսըն էվլինէ քի օնու թու-
թուպ կէօթիւրսիւն Փաթրիքհանէյէ, լաքին
ժամկոչ կիտիպ պուլամատըղընտա էվտէ օ-
լանլարա ըսմարլայօր. հէր նէ վազըթ Հայր
Օգոստինոս կէլէճէք օլուրսա, Հայլարըն Եր-
րօրդուլիւն ժամընա կէլսին, ամրալար
քէնտինի իսթէյօրլար. էրթէ կիւն պու հա-

այլեր եայլալով կիպի, պաշտօնը ճէմի պա-
թօլիք օլան գորգուպ թիթրէմէյէ . աճապ պու-
նէ՞ օլմալը վէ փափաղլարըմըղ օ կիւնտէն 7
կիւնէ գըտար քուշկու տուրուպ սաքընտը-
լար, քաֆիլ թութ քափ օլմասըն տէյէ . էն-
ճամ իշիմիդտէ պու թարղ սէօնպէթ չըգտը .
պիղ աղնատըք պիր շէյ եօղուումը, անճա
սալթ մէքթէպ իշին իմիշ, վէ պու խուսուս-
աան թիւթիւնճիւ սարը խուղաս թօփճու
պաշըյա աղնաթմըջ վէ սըրասընա գօմուշ .
գորգմայըն, պու ճիւմէ միլլէթին եիւրէյինէ
գորգու կիրտի . զիրա պէշարէթլէրտէն պաշ-
լտտը աղնաշըլմապ քէսքին հալածուօ օլա-
ճաղը . իշտէ օլ ֆէսատըն պաշտնկըճը : ²

(Շարունակելի)

¹ Մէյմալ որ նայիս յանկարծ մէկ օր մը թըն-
կըր Յովսէփ աղան իւր չարըյի օտայէն իրիկուան
դէմ վերուցին տարին փաշային դուռը ֆեռհեա
պէյին առջին . քեահեա պէյը կ'ըսէ . Յուսէփ, գօրք-
մա պու ազշամըք պուրտա միսաֆիր սինս կը տա-
նին միւշիր աղան կը հանցնեն . յետոյ եղբայրը
թընկըր Յակոբ աղան նոյն օրը չէր եկած շուկան
Պալթա լիմանի իր եալէն վար ինջեցուցին, նոյն-
պէս անի ալ միւշիր աղան դրին եւ աս օրս խանի
օտան զմուսցին . էրթէսի օրը հանեցին զանոնք
զապիթներով տարին իրեն եալըն, ըսին զապիթայք
թէ՞ թագաւորական հրամանը այսպէս է որ մէյ
մէկ քիշ լաթեղէն պիտանի բաներ առնէք շուտով
դուրս ելլէք զէրէ ամէնքնիդ ալ օլուիս չօճուսով
աքսորվիք պիտոր :

Տե'ս հիմա եղած խեղճութիւնը մեծ ու պըղ-
տիկ վախերնուն ամէնքը գինովցածի պէս թմրեալ
խելք չկայ հիշ մէկին գլուխը, մէկը մէկ դիէն կը
մարի, մէկալը մէկալ դիէն, Տիւղեանց ժամանակը
տեսնուած էր աս խեղճութիւնը . հիմա նորէն ըս-
կաւ այսպէս խեղճութիւն . բայց ի՞նչ շահ որ ե-
ղաւ, ի՞նչ բան որ ճարը չիկայ, ինչ եւ իցէ մէյ
մէկ քիշ լաթեղէն, կտաւեղէն ճամբու հարկաւոր
պիտանի բաներէն առին, հանեցին տունէն ամէն-
քը, յետոյ բազար խալըխին տարին, եալընքը զմրե-
ցին բերին իւսկիւտար հանեցին, այն գիշերը խանը
կեցան, պակաս բաներնին հոն լնայուցին, այս մի-
ջոցին Յակոբ աղային տղան Գրիգորիկը ու Աբրա-
համիկը վախերնուն պահուած էին, բարեկամք գա-
ցին գտան պահուած տեղուանքնին, շատ ընդիմու-
թիւն ըրին թէ չենք երթար, ըսին անոնց եթէ
չերթաք նէ ձեր ֆամիլիան գէշ կ'ըլլայ, ձեր հայ-
րը կրնայ ըլլալ որ աս սեպէպովս խաղայի մը կը
հանդիպի, մեղք են մի ընէք ըսելով, շատ խօսք
ըլլալէն վերջը զատոնք իսքեաթ ըրին ու հանեցին

դուրս, տարին իւսկիւտար էրթէսի օրը ընդ ամէնքը
ճամբայ ելան հրամանը թագաւորական այս էր,
թընկըր Յակոբը Սըվազ, եւ Յովսէփը Ղայսէրի ֆա-
միլիայօքնին, օրվան մը ճամբայ ելան, Գրիգորիկը
գաղտուկ փախաւ, ու մարդ չիմացաւ նաեւ միւ-
սաշիրները աիլէ, յետոյ ժամանակ անցնելէն վեր-
ջը, իմացանք որ շիսակ Բարիզ գացեր է, մէկալ
խեղճերը նայեցան որ չիկայ Գրիգորիկը բնառեցին
չի գտան . ճարերնին հատնելով մինչեւ իրենց աք-
սորուած տեղերնին գացին :

Այս բանս շարունակէր պիտ'որ բոլոր աւգին
վրայ, բայց տէրութիւնը Յունաց հետ պատերազմ
ուեննալով, տէրութեան նաւերը գրեթէ բոլորը
ճերմակ ծովն էր, եւ այս միջոցս նաւերը, նաւա-
րէնի լիմանին մէջ գտնուեցան, եւ լիմանին բե-
րանը ու էթրաֆը, Ֆրանսիայի, ինկիլիզի ու Մօս-
քօֆի նաւեր կար մտան զատոնք նավարէնին մէջ,
բոլոր այլազգի տէրութեան պէյլիկները երեցին
մէյմէկ սէպէպով մը, մէկ երկու մասնորը մուստըր
նաւեր ազատեցան, յետոյ լսեցինք որ տէրութեան
նաւերը իննսունէն էվէլ նաւ երեւցաւ, տէրու-
թիւնը որ իմացաւ աս բանս տակնու վրայ եղան,
վասն այնորիկ պատճառի հայք ժամանակ չուեն-
ցան աս բանս շարունակելու, անոր համար միջոց
անցաւ երեք ամիսի չափ, եւ այս միջոցս որ Ֆրան-
սիայի, ինկիլիզի ու Մօսքօֆի դիսպանները, տէրու-
թիւնը պարըջ չուղելով, հարկ եղաւ որ երթան,
զէրէ շատ աշխատեցան որ բանի մը կապեն, ճար
մը չեղաւ մտան նաւերը գացին ճերմակ ծով :

Այս բանս որ Հայոց բանին շատ յարմար եղաւ
որ զատոնք ալ հոս չեղած ինչ որ ուզենք նէ կա-
րող ենք ընելու ըսելով, միշտ գաղտուկ խորհուրդ-
կ'ընէին հարցնող ալ ըլլար նէ Հայոց թէ ի՞նչ է
ըրած խորհուրդնիդ կ'ըսէին թէ Նորուսպիմայ
պարտքին համար է՝ ըսելով չէին ըսեր զէրէ քա-
հանայ աշխարհական ամէնքը մէկ երդուօ՛ւ ըրեր
էին :

Տէրութիւնները կը կանչէին Պատրիարքարանը ինչ
կ'ըսէին ու ինչ կ'ապսպրէին, ինչ կապանք կը դնէին
որ չէր հասկցուեր բան մը, ֆազաթ աս միջոցներս
սկսան տէրութիւնները տուն տուն քալել ու գրել,
որուն տանը մէջ քանի հօգի կայ, անուննին, տա-
րիքնին մարապետ է մի, ամէն տուն ասանկ դրե-
ցին տէրութեան հրամանը ասանկ է ըսելով, յե-
տոյ տէֆթէրները Պատրիարքարանը կը տանէին,
ուղղափառք կ'իմանային աս բաներս եւ կարծի-
քով ալ կը հասկցուէր թէ գէշ բան մը ազգին վը-
րայ կայ ըլլալու եւ ոմանք կ'ըսէին թէ աս բանիս
տակէն գէշ բան մը կայ ուղղափառաց վրայ ըլլա-
լու խորհուրդ մը ընենք այս բանիս մէկ ճարը
գտնանք չէնէ վերջը գէշի կ'երթայ յետոյ ճարը
չենք կրնար գտնալ, վասն զի յայտնի եղաւ թըն-
կըր Յովսէփի եւ Յակոբին աքսորուած օրէն եւ ու-
մանք տահա առաջ կարծիք ընելով կ'ըսէին այս-

պէս բան մը կ'երեւնայ. վասն զի Հայոց մեծերուն բռնած ճամբէն, եղած ժամանակին պարագանիւրէն յայտնի կ'երեւնար որ զասոնք ասանկ մէկ ճամբայով մը ուղղափառաց ազգը ջնջեն պիտ'որ. զէրէ ուրիշ բան մը պտուղ մը չկար, այլ նախանցութիւն ու հակառակութիւն, ու նէվսանիյէթով ջնջեն մէկ մարդ մը չմայ մէջերնին, ամէնքը աղաքտնան, տէրութեան ծառայող մարդ չըլլայ: Մեր ազգը ուժովնայիւ հայք միշտ զկաթօլիկը հաւածող ըլլայ, եւ նաեւ յաւիտեանս յաւիտենից, գերիի պէս իրենց ծառայող ըլլայ եւ որ ժամանակ ուզենք նէ միշտ չարջարենք:

Չիւնքի ըսինք ուղղափառք իմացան նէ պէտքը չէ՞ որ ասոր ճարը գտնային չի գտնալէն վերջը, ըսողներուն ըսին, թէ այդպէս բան մը ըլլալու ըլլար նէ ամէնքս որ տէրութեան կը ծառայենք կոր եւ կը հարցնենք կոր տէրութեան մարդիկը կ'ըսեն կոր մեզի, խայր չիկայ այսպէս բան ձեր հասին որ Հայք կ'ընեն, եւ ասանկ ընելուն աս շաշիւնները աւտացին, մէկ քովի վրայ կեցան:

Ինչիւհիւ Ահմէտ էֆեն աս ժամանակը քեան պէյ էր տէրութեանը դուռը, իր ստակ բռնողը ամիրայ Սիմօնին տղան Յովսէփն էր, ըսաւ անոր Յովսէփ ձեր վրայ բան մը կայ կը դառնայ կոր նայեցէ՛ք զգուշացէ՛ք տափակի եկեղեցի մ'երթաք ասկից ալ չարթնցան գինովցածի պէս:

ՀԱՅ. ԲՆ.

2 Հայր Օգոստինոսը եւ Հայր Դանիէլը Ղալաթա Սարային մօտերը դպրատուն մը բացեր էին, դպրատան տղաքը օր մը ձայնիւ աղօթք ըրած աստեանին նիզամ ուստայի ունձի քէօր Յարութիւնին տունը մօտ ըլլալով՝ աս տղոց ձայնը առնելով խիստ կը տաքնայ ըսելով թէ ասոնք որո՞ւ հրամանաւ աստեղծ տղոց համար դպրատուն բացեր են, էրթէսի աւտուն ժամկոց մը Հայր Օգոստինոսին տունը կը խաւրեն աս մօքով՝ քահանան բռնէ եւ շիտակ Պատրիարքարանը տանի, կ'երթայ ժամկոցը տունը կը հարցնէ հոս է մի վարդապետը, չէ կ'ըսեն հոս չէ, կ'ըսէ ժամկոցը. գայ նէ ըսէք մեր Երրորդութեան ժամը գայ, ամիրայք զինքը կ'ուզեն կոր, այս բանն ամէն մարդ լսելով տարածեցաւ. յետոյ Հայք նայեցան որ վէսիլէ մը եղաւ խօսք ըլլալու, եաղնշութիւն է եղեր, մարդ իրեն բան ըսող չկայ ըսելով գոցեցին ասկից որ չարթնցան, անձան կ'ըսէին էնկիւրիցիք թէ բան չիկայ չեն կարող բան մը ընելու:

Նայէ Աստուծոյ թոյլտուութիւնը որ ուղղափառաց ազգը կ'իմանային, եւ վերջի մօտ օրերը պայառի տօմոսի նաւերուն մէջ կը խօսուէր, եանի կաթօլիկէրէ պիւր շէյ վար օլաճագ, ամէն ազգ կ'ըսէին եւ շատ ալազգի խօսախներ կը հարցնէին մտնող ելող մարդկանց թէ դու կաթօլիկ ես մի հրամարեան ըսողին կ'ըսէին էֆէնտիները «Պիլի տօսթ պիլիստէնիւ, ըու ֆրէնկ քիլիստէնիւ պիւր էյ-

յամ կիթմէյին, զիրա կէօրիւնիւյօր քի պու եազընտա կաթօլիկէրէ պիւր քէօթիւ շէյ վար օլաճագ, քէնտիւնիկի սազընն»։ Բարեկամաբար շատերը կ'ըսէին. այլ ուրիշ ինչ բան որ կ'ուզես որ ըսես դատաստանին պօրույովը ձեր ականջը փչելու է որ արթննաք թնկըններուն ֆէրմանին մէջի եղած յանցանքն ալ աս բանս վէսիլէ եղած էր գրուած, հիմայ իմացար մի կայ մի գէշ բան չիկայ մի բայց ինչ շահ բան մը կայ կ'ըսեն «գուշ էլտէն ուչտու»։ Հազար վախ փիւր ափսոս մէկ ստակ, Աստուծոյ առջեւ, եւ Աստուծոյ դէմ ըրած յանցանքն շատնալովը չափերնին լեցուեցաւ, մենք մեզի գալով չարթնցանք Աստուծոյ աղաղակելով: Աստուած նայեցաւ որ աս գինովութեամբը յաւիտենական դատապարտութեան գերի ըլլանք պիտոր, վասն այնորիկ թափեց մեր վրայ իր բարկութիւնը. չէնէ մեզ սիրելուն պատճառը հաւատքին սեպելով ըրաւ, որ համբերութեամբ քաշողը եւ մեռնողը արքայութեան արժանի ըլլան, պէտք է որ աս բանին մեծապէս շնորհակալ ըլլանք Աստուծոյ, զէրէ ուրիշ պատիժով մը մեզ կորսնցնելու ըլլար նէ քէշին քէշը ան ատեն էր:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԵ

ԱՌ ԲԱՋՄԱՎԷՊ

Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Տրդատ Թագաւորին հետ Հռոմ գացած ըլլալն ապացուցանող մեր փոքրիկ երկապրութեան վրայ դիտողութիւն մը երեւցած է վենետիկոյ Միլիթարեանց Բազմավեպ պարբերականին Մարտ-Ապրիլ թիւին մէջ, զոր Մեմուա աճապարած դրած էր, կարելի է գրուածը իր ճաշակին յարմար գտնելով. Այս գրութիւնը, եթէ ո'չ մտացածին, այլ գոնէ՛ տարակուսական և խնդրական կ'ուզէ ցոյց տալ հայ պատմութեան ամենէն շքեղ այս դէպքը, որ և կարի չքեղօրէն հաստատուած է Հայ Պատմութենէն, Թէ և անապացոյց և վարկաբարդի այդ դիտողութիւնը զուրկ է ունէ՝ ո'չ միայն գիտական այլ նոյնիսկ մատենագրական կարեւորութենէ, սակայն երկու խօսք պէտք է ըսենք, թէ՛ արիւնցնելու համար անգգոյշները այգլիսի անորոշ և չճշդուած բայց ամենասուրբ բաներու համար իսկ տարակոյս ծնուցանել կըրցող անցողակի նետերէ, — ի նեցե որ քուշի ի տուէ, յիւր որ քոշի ի խաւարի, և թէ՛

միանգամ ևս ցոյց տալու համար թէ քմածին ժխտումը չունի բնաւ սպացոյց, Առհասարակ ճշմարտութեան հակառակորդը ձրի կը ժխտեն :

Նախ սխալ է թէ մեր պաշտպանած քեզը այս է՝ Ս. Գր. Լուսաւորչի Տրդատ թագաւորին հետ ի Հոռոմ ուղեւորութեան պատմական դէպքին ստուգութիւնը, — յեցած ըլլայ միայն Չառեաններու, Աւգերեաններու, Յովնանեաններու վրայ. (— Ինչո՞ւ չի յիշեր արդեօք, և այն ի գլուխսիսկ գրոց, անգուգակսն Գարբրեանը, որ ինքնին առանձինն, բաւական է խուժերու դէմ !). մեր ցոյցը պարզապէս կը յենու պատմական ահագին Դեպքի մը վրայ զոր բացայայտ վերկայութեամբ կ'աւանդեն մեր ազգին ԱՄԵՆ պատմիչները, հիւանալի՜ անուններ, ինչպէս են Ագաթանգեղոս, Զենոբ, Փարպեցի, Բուզանդ, Եղիշէ, ևն. մեր ցոյցը յեցած է վիթխորի աւանդութեան մը վրայ՝ ամբողջ ազգի մը, չորրորդ դարէն մինչև ցիննեւտաներորդ շարունակուած, անընդհատ և հաստատուն և բնաւ չընդդիմաբանուած : Յետոյ մինք ըսինք թէ այն աւելորդ պարագաները զորս Ագաթ. գրած ունի և որոնց համար միայն կըցած են քանի մը նորեր տարակոյսներ յարուցանել, կա՛մ սխալ հասկցուած են և կա՛մ աննշան են, և հետեւապէս չեն ստանաներ իրաց ճշմարտութեան : Ահա այս պարագաներու մէջ — և ո՛չ թէ ջերմ պաշտպան ըլլալու համար միայն — է՝ որ գիտական կերպով և ըստ կանոնաց Կրիսիկայի հետեւցողինք թէ այդ դէպքը պատմականաբար ստոյգ է : Ատոր հակառակ յառաջ չի բերուիր բնաւ պատճառ մը, գիտական ապացոյց մը, այլ լոկ և չոր մերժում մը յոմանց, անկերպարան տարակոյս մը՝ յայլոց : Այս ոճով Վօլդէն, Բընան, Արդիականք կը մերժեն մինչև իսկ և մանաւանդ Ս. Գրոց Պատմական Դէպքերը. — սեւել, մի՛՞տս սեւել, — սրբութեանց մէջ խրամատներ բանալու և մարդիկը, գո՛նէ տարակոյսով, կորսնցնելու համար : Այսպէս կ'ուզեն ու կը ճգնին ընել նաև Ուրացողներ, Հերետիկոսներ, Փարիսեցիներ, պարզամիտները խարելու դայթակղեցնելու,

կաթողիկէութիւնը հարուածելու կամ անշքացնելու համար : Մոլորելո՞ց որակն է այդ . Արդիականքի պահանջն է այդ . . . բայց ո՛չ՝ կաթողիկէից, կրօնաւորաց, մենաստանաց թերթերուն . . . Թէպէտև արդէն Կաթողիկէ բառը բնաւ չարտասանելու ճիգ մը կայ այդ Վենետիկոյ Միթիթարեան թերթին Դիտողութեանը մէջ¹, և այս ուղեւորութիւնը — եթէ ճշմարիտ՝ ալ եղած ըլլա՛ր — կ'անուանուի «ազգային պարծանք», և անոր հետեւութիւնը կ'որակուի մի միայն իբր «եղբայրական սիրոյ զօդ ու հաղորդակցութիւն մը», զոր չնորհք կ'ըլլուի հաւատալու «սեռագոյն եղած», ուստի ըստ Միթիթարեան Բազմավեպ թերթին, այս ուղեւորութիւնը՝ 1. ստոյգ չէ 2. գրեթէ սուտ է. 3. եթէ երբեք տեղի ունեցած ալ ըլլայ՝ ա) լոկ ազգային պարծանք մըն է, բ) պարզապէս հաւասարեւորութեան մէջ եղած եղբայրական սիրոյ զօդ մըն է և տեսակ մը հաղորդակցութիւն, որ հնար է՝ սերտագոյն եղած ըլլայ. — ահա ա՛յսչափ, ուրիշ ոչինչ : — Այսքան ծանրակշիռ պարագայի մը մէջ, ա՛յսչափ առաձգական, յետին ու ծածկուած միտքերու կասկածներ տուող և նոյնիսկ նուրբ քօղին ետեւէն իր ինքնութիւնը ըստ բաւականի ակներև ցուցադրող այս հետեւութիւնները ի՞նչ հիման վրայ կ'առաջարկէ գիտական՝ մանաւանդ կաթողիկէ աշխարհի առջև, այս Միթիթարեան կրօնաւորի գրիչը, որու ալ լինի այն : Այդ գրութեան մէջ տարակոյսներ զիբար կը գլեն, անհեղեղ առաջարկութիւններով, Նոյն իսկ կ'աղրակացնէ թէ, եթէ ընդունուի իսկ ու-

¹ Զարմանալի՜ գուգադիպութիւն. նոյն Բազմավեպ թերթը հոն, քիչ մը վար, գովասանքը ընելով Գեր. Մաղարեան Վ.ին հրատարակած Տէր Կոմիտաս Նահատակին վարուցը, նոյն Նահատակը կը կոչէ «ազգային ամենամեծ պարծանք», «իւր հաւատոց տեղեւան», «Բրիտանի սիրոյն համար մարտիրոսացած», «համարուած տարածուած արդէն ազգիս մէջ», ևն. արդեօք ազգ ըսելով Միթիթարեանք կաթողիկէները միայն կ'իմանան . . . յամենայն դէպս փափաքելի էր գոնէ մէկ անգամ՝ Հայ Կաթողիկէ հասարակութիւն, Հռովմէական Ս. Եկեղեցի, Կաթողիկէ կրօնիցս համար մարտիրոսացած, էջմիածնականաց մասնութեամբ, կամ ասոնց նման ո՞ճ մը գործածուած տեսնել :

դեւորութիւն մը, և ասն ալ՝ ի Հոռոմ, այսու հանդերձ, տեղւոյ ա՛յդ հանգամանքը՝ ինչպէս կ'ըսէ, շատ տարակուսական կը մնայ: «Մեր ձեռքն եղած այսօրուան առհաւաստեաներով կարելի՞ է, կ'ըսէ, պատմական ստուգութեամբ ճշդել թէ յիշատակուած Հոռոմ քաղաքն է՞ր ստուգիւ Հոռոմ, մայրն քաղաքաց, թէ Կ. Պոլիս... թէ Կեսարիա... թէ... նոյն իսկ երուսաղէմ»: Կը զարմանանք թէ ինչո՞ւ ուրիշ քաղաքներ զեռ ետեւէ՝ ետեւ չչարուեցան... Այս ոճը սակայն բանապաշտներուն է, որոնք ամէն բան, մանաւանդ Ս. Գրքի մէջ, կը վերածեն վիպականի, mytheի, մինչեւ իսկ իսկ զԻրիստոս: Մերժելը ո՛րքան զիւրին է, Հոռոմը՝ Հոռոմ հասկնալու համար ի՞նչ առհաւատչեայ կ'ուզուի եղեր. միայն թէ այդ մերժող արտաքին մանաւանդ այլադաւան պատմիչներու ամենայն այլանդակ ենթադրութիւնները չ'ուզուի իւրացնել: Ստոյգ է որ ի հնումն այս տեսակ ծածկաբանութիւններ երբեմն կ'ըլլային, զ. օ. Պետրոս Առաքելով իր թղթոյն մէջ զՀոռոմ կ'անուանէ Բաբելոն, մանաւոր և ստիպիչ պատճառներու համար. սակայն կրնա՞նք միթէ ասկէ հետեւցնել թէ ո՛ւր որ Աստուածաշունչի մէջ Բաբելոն բառը կայ, միշտ կը նշանակէ Հոռոմ...:

Կարելի է թէ այդ քաղաքներէն ոմանց երբեմն մէկ հեղինակ մը Հոռոմ ըսած ըլլայ, — թէիւ այդ շատ հազուադէպ է, և նոր մակդիրով և ոչ ամէն քաղաքաց համար, սակայն ըսել չէ որ ուր որ Հոռոմ կ'ըսուի, միշտ պէտք ըլլայ չհասկնալ իրական Հոռոմը: Արդ մեր պատմիչները միշտ Հոռոմ ըսած են, միշտ անփոփոխ. և բուն Հոռոմ ըլլալը յայտնող բացարձակ հանգամանքներով օ. հ. Դադմասացւոց երկիր (Դադաիա) ըսելով են. եթէ ուրիշ քաղաք մըն էր. գոնէ անգամ մը, գոնէ մէկը յիշէր զայն. և Ս. Սեղբեստրոս Բանայապետին անունը ի՞նչ կը նշանակէ, վերոյիշեալ քաղաքաց մէջ ո՛ւր պիտի գտնենք զինքը...: Չ'արժեր այլեւս շարունակել:

Այս գրութիւնը սակայն «Ազգային մատենադրաց հաստատուն ու միաձայն աւան-

դութիւնը» չմեծեցու չնորհքը կ'ընէ, զի արեւու դէմ աչքը գոցել պիտի ըլլար. իսկ «արտաքին մատենադրաց մերժողական դրութիւն» կը վերագրէ. մերժողական դրութիւն, այո՛, բայց ո՛չ ապացոյց. ո՛րչափ զիւրին բան: Մանաւորենք սակայն. եթէ հին մատենադրաց վրայ է խօսքը, մերժողական չէ այդ դրութիւնը, այլ միայն լուութիւն է, որ բնաւ բան մը չ'ապացուցաներ ընդդէմ վերոյիշեալ դրական ապացոյցին, ինչպէս մեր գրքոյկին մէջ պարզեցինք. իսկ եթէ խօսքը նոր մատենագիրներու վրայ է, նախ ասոնք թուով նուազագոյն են քան այս դէպքը իբր ստոյգ ընդունողները. երկրորդ՝ շատերուն, և պիտի ըսէի՝ գրեթէ ամէնուն, մերժումը երկրորդական պարագայից չափազանցութիւններուն վրայ հիմնուած էր և է. արդ ասոնք միեւնոյն չափերու մէջ գոյութիւն չունին այլ եւս, ինչպէս ըսինք. երրորդ՝ բնաւ դրական փաստ մը չունին, ինչպէս Ստրենացիին ինչ ինչ մասերուն դէմ, որոնց մերժումը իրաւացի է՝ պատմական նոր գիտութեան, դրական տուեալներու վրայ հիմնուած ըլլալով, իսկ այս ուղեւորութիւնը մերժողներուն փաստերը կամայական հաստատութիւններ են միայն, քմահաճոյք և ոչ բնաւ տրամաբանական ապացոյցներ, որով և ձգի մերժում. չորրորդ՝ ասոնք կա՛մ բողոքական են, կամ ուրացող կամ հերձուածող. արդ գիտական փաստը մեր կողմն ըլլալով հանդերձ, ի՞նչ է արդեօք մանաւանդ կաթողիկէ կրօնաւորաց համար ստիպումը, անհրաժեշտ հարկը՝ ասոնց միայն հետեւելու, և ոչ բաղմամբիւ հիմնապէս գիտնական կաթողիկէից և նոյն իսկ գիտնական այլադաւաններու, որոնք իբր ստոյգ դէպք մը կ'ընդունին այս ուղեւորութիւնը. ի՞նչ է այս մերժումի մարմալը. կաթողիկէ ժողովուրդը փոխանակ չ'ինքնու՝ անոր սիրելի մէկ խնդրոյն մէջ գոնէ կասկածեցնելու յետին միտքն ի՞նչ է և ինչո՞ւ չի մտածուիր որ այսպիսի ապաժաման փորձերը ամբողջ Միաբանութեան գաղափարը կ'արտայայտեն, քանի որ Միաբանութեան պաշտօնական թերթն է որ կը տպէ այս տեսակ առաձգական երկդիմի գրութիւններ, մինչ-

դեռ կաթողիկէութեան ի պաշտպանութիւն բնաւ բան մը չի տպեր. այնու աւելի ծանր, զի հոգւոց փրկութեան ու դատարարակութեան գործոյն մէջ մեծ մաս մը ունին... մինչդեռ ամբողջ կաթողիկէ աշխարհ, մանաւանդ կրօնաւորները, ամենամեծ շարժման մէջ են, կաթողիկէութեան ի պաշտպանութիւն: Այս անտարբերութիւնը սակայն մեր մէջ ժամանակիս ցաւալի երեւոյթներէն է. ուրիշ առթի մէջ ալ յիշեր էինք Պօղոս Առաքելոյն խօսքը. «Եթէ չհարոգեմ, եթէ ճեմար-տութիւնը չըսեմ բարձրաբարբառ, ես կը դա-տապարտուիմ»:

Այս առթիւ չենք կրնար հոս յստաջ չե-րել քանի մը կտոր՝ այն գերիմաստ ու նշա-նակելի ճառէն, զոր մեր սիրեցեալ Քահա-նայապետն Պիոս Ժ. խօսեցաւ Մայիս 27ի Կարդինալաթողովին մէջ, որմէ ամէնքս կըր-նանք օգտուիլ անձնիւր չափով. խօսելով նոր կարդինալներուն, կ'ըսէ Ս. Հայրը.

«Դուք, ո՛վ իմ սիրեցեալ Որդիք, դու՛ք ինծի իրապէս օգնականներ պիտի ըլլաք՝ ա-նարա՛տ պահպանելու համար Հաւատոյ ա-ւանդը, պահպանելու համար եկեղեցական բարեկարգութիւնը և դիմադրելու համար կեղծեալ ու ծպտեալ յարձակումներու որոնց ենթարկուած է Եկեղեցին, ո՛չ այնչափ իր յայտնի թշնամիներուն կողմանէ, որչափ մա-նաւանդ, իր սեպհական որդւոց կողմանէ... վարդապետութեան մասին կրնայ ըսուիլ որ ուրիշ որ և իցէ ժամանակի մէջ այնչափ հարկաւոր եղած չէ աչքաբաց հսկել այս սըր-բազան աւանդին վրայ, որպէս զի անոր թէ՛ ամբողջականութիւնը և թէ՛ մաքրու-թիւնը, անաղարտ պահուի: Սակայն այն-պիսի ժամանակի մը մէջ կ'ապրինք, յորում շատ դիւրութեամբ և յօժարակամ կ'ընդ-զըրկուին և կ'իւրացուին տեսակ մը դադա-փարներ որոնք կը ձգտին Հաւատքը հաշտե-ցնելու արդիական ողբոյն հետ, զազափա-րներ որոնք կարծուածէն շա՛տ հեռու կը տա-նին ո՛չ միայն դէպի տկարացումն. այլևս դէպի ամբողջական կորուստ հաւատոյ... Արտասովոր բան չէ հանդիպիլ այնպիսի ան-ձերու որոնք ճշմարտութեան վրայ կը յայտ-

նեն տարակոյտներ և անտուգութիւններ... Ո՛հ, քանի նուորդներ, որքան նաւուզիղ-ներ և—Աստուած մի՛ տրտոցէ,—քանի նա-ւապետներ կատարեալ վատահոլութիւն սուփն արտաքին նորութիւններու և, մեր ժամա-նակին պատիր ու ստախօս գիտութեամբ, նաւաբեկութիւն ըրին նաւահանգիստ չհա-սած... Քարոզեցէ՛ք ամէնուն, այլ մա-նաւանդ քարոզեցէ՛ք Եկեղեցականներու և ուրիշ Կրօնաւորներու, որ չկայ բան մը որ այնքան տհաճելի ըլլայ Մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի ու անոր Փոխանորդին՝ որչափ անհամաձայնութիւնը վարդապետութեան մասերուն մէջ, վասնզի անմիաբանութեան և բանակոխներու մէջ Սատանան է որ միշտ կը տանի յաղթանակը... Զգուշացուցէ՛ք մանաւանդ քահանաները՝ կասկածելի անձե-րու բազմախուռն թիւին դէմ, և նաև ըն-թերցումին դէմ այն գրքերու և թերթերու, չպիտի ըսեմ շատ յոռի ու վատթարներուն, որոնց մէջ չի գտնուիր բնաւ պարկեշտ բան մը, այլ նաեւ այնպիսիներու ալ ընթերցու-մին դէմ, որ յամենայնի հաւանեալ չեն Եկե-ղեցիէն. զի օգն սր հոն կը շնչուի, մահաբեր է, եւ զի անհնարին է դպչիլ նաւթին եւ չաղանդիլ»:

Ճայս վայր Ս. Քահանայապետը:

Այս խրատները կարի այժմէական եւ ա-մէնուս ալ յոյժ օգտակար են:

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԳԵՆՈՐ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

ԳԻՐԻ Ա.—ԳԼ. ԻԱ.—ՄՐՏԻ զԼՂԵԱՆՎ ՎՐԱՅ:

ՄՐՏԻ ԱՆԽԱՏԱՏՈՒՄԵԱՆ ԵՒ ՄԵՐ ՔԵՆՈՒՔԻՆՆԵՐՆԵՐ ՈՂՂԵՐՈՒ ԱՆԽՈՂՈՒՄԵԱՆ ԿԱՏԱՍՈՒՄ, ՄԵՐ ԽՈՂՈՅՆ ԳԱ-ՆԵՐԸ չԻՆՖ զԳԱՐ. ԱՅՂ յԱՃԱՅԻ ՈՒՆԱՅՆԱՏՈՒՄԵԱՆԻ ԿՐ ԺԻԺԱՂԻՆՖ, ԵՐԻ ԻՐԱՆԱՄՔ ԿԵՏՖ ԷՐԻՆՖ յԱՂ:

ԶԿԱՅ ճՅԱՐԻՏՈ ԱՂԱՏՈՒՔԻՆ ԵՒ ՆՂ ԱՆԽԱՏՈՆ ՈՒ-ՐԱԽԱՆՔԻՆ, ԵՐԷ ՆՂ ԱՏՈՒԾՈՅ ԵՐԿԻՂԻՆ ՄԷ՛ ՔԱՐԻ ԽՂՁՄՏԱՆԻՍՎ ԽԱՆՂԵՐՁ:

Երանի՛ սևնոր որ կրնայ մերժել ցրու՛մ պատճառող
անկն արգելի, եւ անկողիդ իր միտքը սուրբ զորման
միաւորութեան:

Երանի՛ սևնոր որ կը հեռացնէ իրմէ ինչ որ կըր-
նայ արասաւորել կամ ծանարեւունել իր խղճմանիցը:
Կռու՛՛ արուքեամբ, սովորութիւնը սովորութեամբ
կը յաղթուի:

Երբ դու կարենաս մարդիկները բողոք, անոնք ալ
անշուշտ զիկզ պիտի բողոքն որ քու գործերուդ գրադիս:

ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵԶԻԱ

(Պիտս Ժ.ի կոնդակը)

Սրբուհի Թերեզիային հոգեւորական վարդապետութիւնը

Սակայն և այնպէս, քանի որ փոփոխութեան և
նորութեան փափագը, որ մեր ժամանակներուն բնու-
թող նշաններէն մէկն է, երեւա՛ն եկած է մինչև ան-
գամ հոգեւորականութեան և խորհրդաւոր աստ-
ուածաբանութեան մէջ, կը հասկցուի թէ ո՛րչափ
կարեւոր է պահել այս երկու գիտութիւններուն մէջ
Սրբուհի Թերեզիային ուսուցած վարդապետութիւնը:
Որովհետեւ: Ամենակարողը զանիկայ լեցուց հանձարի
պիտի, ոչ միայն որպէս զի անիկայ Աստուծոյ Եկե-
ղեցւոյն շինութիւն տայ իր սուրբ գործերուն օրինա-
կովը, այլև որպէս զի զայն արգասաւորէ իր երկնա-
յին իմաստութեան աւատ ջուրերովը: Ինչ որ ըրաւ
իր ամենարարը բարեպաշտութեամբ լի գերքերուն
մէջ հոգեւորական աստուածաբանութեան վրայ խո-
սելով:» (կոնդակ սրբազոյցման)

Իր երկերը ընթերցողը՝ սրբութեան գաղտնիքը
գտնելու համար ալլուր փնտռելու պէտք չունի: Բա-
րեպաշտութեան այս նշանաւոր վարժուհին՝ Աստու-
ծոյ երթուլու ուղիով ճամբան ցոյց կուտայ, և այն
քրիստոնէական կեանքի սկիզբներէն մինչև աւագի-
նութեանց ամենարարը կատարելութիւնը: Մերթ,
վճիտ սճով, ցոյց կու տայ հոգւոյ վառութար միտում-
ները ուղղելու, անոր խոսքովները խաղաղելու, կամ
զայն որատող բիծերը ջնջելու ամենայարմար միջոց-
ները, մերթ առաքելութիւնները սերելու և գործա-
դրելու մղող զգացումներ կ'ազդէ ընթերցողին: Բոլոր
երկերուն մէջ, ուր իր վարդապետութիւնը կ'աւան-
դէ անկերեւ կը տեսնենք աստուածային իրերու գե-
րազանց գիտութիւն մը, որ ցոյց կուտայ նաև թէ
ինք ճիշտովն և փորձառութեամբ ծանօթ է հոգւոյ
բնութեան, անոր թաքուն ծալքերուն, անոր ամե-
նէն ներքին խորութիւններուն: Փորձառական ճո-
նաչումը զոր ունէր մարդկային տկարութեան նկատ-
մամբ, ընկերով վրայ արգահասելու կը շարժէր Թե-
րեզիայի փափկազգած և անսահման սիրոյ յորդ ե-
ռանգով զեղուն սիրտը: Այս գործնական գիտու-
թիւնն է որ կը բացատրէ իր հոգեբարբաք մասծա-
կան աղօթքին շերտութիւնն ու քաղցրութիւնը, ըստ

գեղեցիկ նկատողութեան մեր երջանկայիշատակ հա-
խորդին, Լեւոն Ժ.ի, որ Թերեզիային երկերուն մա-
սին հետեւեալը կը գրէ. «Անոր գրուածքներուն մէջ
կայ ուժ մը հրաշալի, աւելի երկնային քան մարդ-
կային և միանգամայն զմեզ մեր կեանքին ուղղու-
թեան ձեռնամուխ ընելու շատ յարմար: Շահեկա-
նորէն պիտի կարգացուին ոչ միայն անոնցմէ որ իրենց
կեանքին կանոնաւորման համար հոգեւորականու-
թեան դասեր կը փնտռեն, կամ Աստուծոյ հետ ա-
ւելի սերտիւ միանալու կը փափաքին, այլ նաև ա-
նոնցմէ որ սրտանց կը բաղձան իրենց պարտքերը լաւ
կերպով կատարել կամ քրիստոնէական առաքելու-
թիւնը գործադրել, մէկ խօսքով, այն ամենէն որ
ստուգիւր փոյթ կը տանին իրենց հոգւոյն փրկու-
թեան»:

Անոր խորհրդական աստուածաբանութիւնը

Խորհրդական աստուածաբանութեան գաղով,
Թերեզիայ անոր ընդարձակ և անմերձեցալի սահման-
ները կտրեց անցաւ, զանոնք նկարագրեց, անոնց վրայ
ճառեց այնպիսի ձեռնահասութեամբ որ աստուգիւ-
կարծես թէ ան իր սեփական մասնաճիւղն է: Այս
գծուարին գիտութեան մէջ գաղտնիք մը չկայ որուն
միջին խորշերը հետազոտած չըլլայ իր սուր մտքով:
Ինք հայեցողութեան ումէն աստիճաններէն անցնե-
լով, բարձրացաւ մտածականի այնքան վեհ վիճակի
մը, որ այս ուսման մէջ անոնք միայն կրնան իր ե-
տեւէն հասնիլ, որոնց առջև փորձառութիւնը՝ շնորհ-
քի աստուածային ներգործութիւնները քողագիծեր
է, զանոնք իրենց մերձեցալի ընելու համար: Սակայն
ինք ինչ որ կ'ուսուցանէ կատարելով կերպով համա-
ձայն է Աթոռիկէ ամենախիստ աստուածաբանու-
թեան հետ, և իր վարդապետական բացատրութիւնը
այնքան պայծառ է և այնքան անթերի, որ այն
ժամանակին ամենէն հաշակաւոր վարդապետները կը
հիանային իմացականութեան վրայ այս կնոջ որ
կրցեր էր շքեղ ճառի մը մէջ ամփոփել խորհրդական
աստուածաբանութեան վարդապետութիւնները, որ
մինչև այն ատեն միջին և հաղուազիւտ էին, Եկե-
ղեցւոյ հայերուն բազմութիւ երկերուն մէջ. ցրուած
ըլլալուն համար:

Մենք այս վարդապետութիւնը արդի մոդորու-
թեանց դիմացը դնելով, չենք կրնար ետ կենալ սա
դիտողութիւնը ընելէ, որ Թերեզիայ, հոգիի ամէն
խորհրդական վիճակներուն մէջ, ոչ միայն ճշգրիտ կա-
րողէ, այս գերբնական երեւումներուն մէջ, մարդկայի-
նին և աստուածայինին բաժինը, և անթերի կերպով
կը նկարագրէ իմացականութեան և կամքի դերը,
այլ կը հաստատէ թէ պէտք է որ ամէն առաքի-
նութիւններու գործադրութիւնը անհրաժեշտ կեր-
պով ընկերանայ հայեցողական կեանքի բազմաթե-
սակ գործողութիւններուն: Ինք, իրօք, կ'ուսուցանէ,
որ մտածական զանազան աստիճանները, իրեն յա-
ջորդական և գէպի կատարելութիւն բարձրացող օ-

թեւաններ են. ասկէ զատ կը հաստատէ թէ հոգիի մը մտածականի մէջ առաջ երթալը ցոյց տուող միակ նշանն է իր պարտքերը աւելի կրօնասիրութեամբ կատարելու և աւելի սրբութեամբ ապրելու առաւելագոյն փոյթն ու ջանքն է և թէ վերջապէս հոգի մը որչափ Աստուծոյ միացած է խորհրդական կեանքի մէջ իր սէրը և յնչափ ճառագայթելու և յորդելու է ընկերոջ վրայ, և հոգիներու փրկութեան համար այնչափ աւելի խանդակաթ ըլլալու է:

ԽԱԼԻՖԱՆԵՐՈՒ ՆԱԽԻՆ ՈՍՏԱՆԻՆ ՄԷՋ ՀԱՅԳԱԿԱՆ ՅՈՐԵԼԽԱՆ ՄԸ ¹

Անցած Ապրիլ 26ը յաւերժական յիշատակաց արժանի ու փառաւոր օր մըն էր հայ ծխի եւ Պաղտատի Հ. Կ. հասարակութեան համար, որ նոյն օրը տօնախմբեց իր Գերջ. ժողովրդապետին, Փիլիպպոս Թ. Մ. Վ. Մալաքեանի քահանայութեան յիսնամեայ յորելիանը:

Յիշեալ յորելիանը բացուեցաւ հանդիսաւոր պատարագով, զոր նորին Գերջ. Տէրութիւնը մատոյց իր ժողովրդեան համար, և ի ներկայութեան Առաքելական նուիրակին (Mgr. Jean Drur), Գիլտանի Կ. փոխանորդ եպիսկոպոսին (Խթիֆան Մըպուրի) լատին եւ արեւելեան կղերին եւ մայրապետան:

¹ ԅօդուածագիրը բաւական ասորիներէ ի վեր կը պատրաստէ Պաղտատի և Պասրայի քրիստոնէութեան և ի մանաւորի քրիստոնէայ գերդաստաններու պատմութիւնը և ազգաբանութիւնները: Արդ այս առթիւ ջերմագին կերպով կը խնդրէ պատուական ընթերցողներէ որ հաճին իրեն ղրկել կամ ցոյց տալ ինչ ծանօթութիւն կամ տեղեկութիւն որ ունին կամ գիտեն յիշեալ երկու քաղաքաց հայ հին բնակիչներու մասին:

Այս առթիւ հրապարակաւ ջերմագին շնորհակալութիւն կը մատուցանէ Գերջ. Հ. Իսահակ Վ. Սրապեանի, որ անոր այս փափաքը իմանալուն պէս ինքնաբերաբար և առանց ուրիշ նոր խնդրանքի մը փութացած էր իր ձեռքին տակ ունեցած բոլոր տեղեկութիւնները հաղորդել, ան ալ չորս հինգ տեղաւէն. ինչ ազնիւ գործ: Բանասիրութիւնը ո՛րչափ կ'օգտուէր և կը յառաջանար եթէ ի լոյս հանուէին և գործածուէին փոյններու տակ թաղուած և ցեցեբու ճարակ եղած հին վաւերաթղթերը, հին համակները և տետրակները. աւա՛ղ, մինչեւ երբ արեւմտեան աշխոյժ ու գործունէայ մտքէ զուրկ պիտի մնանք:

տաց մէկ մասին եւ երկսեռ ընտիր խումն բաղմութեան մը: Գերջ. պատարագին առնթերկայ էին երկու կիսազգեստ քահանաներ, որոնցմէ մէկը ծննդեամբ հայ Կարմեղեան կրօնաւոր մըն է, մէկալը՝ ասորի քահանայ: Իսկ արարողապետի եւ սարկաւագի պաշտօնները կը վարէր Գերջ. Տ. Ներսէս Վ. Սայեղեան:

Ս. Պատարագը գրեթէ իր բոլոր մասերովն ու պարագաներովը այնքան հիանալի ու այնքան հոգեգրաւ հոգեթով էր որ ներկաները յափշտակուած վերացած էին եւ հոգեզմայլ ու անշնչ կը դիտէին հայ ծխի վեհութիւնը ու շքեղութիւնը, մինչ երգերու ներդաշնակութիւնը քաղցրաձայն երգեհոնի ընկերակցութեամբ՝ անուշ հովիւի նման կու գար կը զուարթացնէր անոնց բաբախուն սիրտերը. ոմանք արտասուելու չափ յուզուած էին, ուրիշները այլեւայլ խօսքերով կ'արտայայտէին իրենց սքանչացումը եւ զգացած սպաւորութիւնը, այնպէս որ կրնամ ըսել թէ կենաց մէջ թերեւս առջի անգամն էր որ ականատես կ'ըլլայի այնպիսի բուռն, ընդհանուր եւ երկարատեւ հոգեկան սուրբ յուզման մը: Գիլտանի Կ. Փ. Սրբազանին աւետարանէն վերջը ըրած քանախօսութիւնը փայլ մը աւելի տուաւ օրուան հանդիսին:

Օրերով առաջ թափուած աշխատութիւնն ու ջանքերը անակնկալ յաջողութեամբ պլասկուեցան, եւ թող ներուի ինծի ըսել թէ այս յիշատակելի պատարագը հնազիտութեան, գեղապիտութեան եւ ներկայ ժամանակիս ու պարագաներու պահանջմանց համեմատ պատրաստուած էր, եւ կարծեմ թէ ասոր մէջ փնտռելու է սոյն մեծ յաջողութեան գաղտնիքը. կեցցէ՛ հայ ծէսը:

Պատարագէն վերջը, Գերջարգելի Յորելեանը ընդունելութեան հոյակապ դահլիճը ելաւ հոն ընդունելու համար ամէն ազգէ կըղերին եւ ժողովրդեան շնորհաւորութիւնները: Սակայն ամէն բանէ առաջ Ամեն. Գերբըշանիկ Հոգեւոր Տիրոջ շնորհաւորական հեռագիրը ծափահարութեամբ կարդացուեցաւ եւ մէկ քանի խօսողներէ վերջ յա-

ռաջ անցաւ Գեր.Տ. Ներ. Վ. Սայեղեան եւ ամփոփ կերպով ներկայացուց Պաղտատի Հ. Կ. գաղթականութեան երկու հարիւր տարուան կեանքը, ինչպէս նաեւ ծերունի Հանգիսապրին կենսապրութիւնը:

Երեկոյին ալ 70ի չափ հրաւիրեալներ խիստ ճոխ ու փայլուն շքասեղանի մը շուրջը բոլորեցան, եւ մինչեւ ժամը երեք ու կէս ըստ թուրքաց անսովոր եւ աննկարագրելի խանդավառութեամբ զուարճացան ու զուարթացան, յանունս գոհ ընելով մեր ալիւոր ժողովրդապետը, որուն համառօտ կենսապրութիւնը պատշաճ է ծանօթացնել ընթերցողաց:

Նորին Գերայգլխութիւնը ծնած է Պաղտատ 1836ին Մարտ 2ին: Անոր հօր անունն է Դաւիթ Մաղոյ (Մաղաք) և է շառաւիղ Երեւանէ Համատան, Համատանէ Պաղտատ գաղթող բաւականաչափ նշանաւոր եւ վաճառականութեամբ զբաղող ազգատոհմի մը, որուն առջի յիշատակութեան Պաղտատի մէջ կը հանդիպինք 1751 թուականին: Իսկ մօր անունը Անճէլ է որ աղջիկն է Յովհաննէս Աստուածատուրեան Պապիրեան Պաշի Տիգրանակերտցի երեւելի վաճառականին, որ 1808ին իրրեւ պարտքի մը փոխարէն երկու տուն նուիրած է Զմմառու վանքին, այս և ետքէն գտնուած տներու տեղւոյն վրայ կանգնած են Պաղտատու այժմու եկեղեցին եւ ժամատունը: Այս Պ. Յովհաննէսին աղջիկներէն մէկը, Ուսանայ, կինն էր Մեծն Նաբոլէոնի զինուորական պաշտօնատարներէն մէկուն, որ ասկից 80—90 տարի առաջ կը պաշտօնավարէր ի Պաղտատ իրրեւ զինուորական մարզիչ եւ կը կոչուէր Տէվոյ խան (M. Jean Devaux):

Արդէն պատանի էր մեր Յորեկեարը եւ առեւտրով կը զբաղէր երբ յանկարծ եկեղեցական կոչման միտեցաւ եւ Զմմառու վանքը ուղարկուեցաւ, ուր 1864ին Ապրիլ 24ին քահանայ ձեռնադրուելով լուսահոգի Միլքոն Նազարեանի ուղեկցութեամբ Մարտին կ'երթար եւ հոն մէկ տարի ու երեք ամիս պաշտօնավարելէն վերջը իր հայրենիքը կը դառնար:

1875ին Յունուար 1ին Տ. Թովմաս Պատմաճեան, Պաղտատու նախնիքաց ժողովըրդապետը կը վախճանէր եւ անոր տեղը ժողովրդապետ կը կարգուէր Փիլիպպոս Վ. Մաղաքեան, որուն քառասուն տարուան շրջանի մէջ ըստ կարի ըրած ծառայութիւնները եւ յառաջ բերած արդիւնքները գնահատելի են, ի մասնաւորի անոր շինարարութիւնը, որովհետեւ 1884ին անոր ջանքովն է որ ժամատունն ու անոր յարակից երեք տները ի հիմանց նոր շինուեցան եւ եկեղեցին զանազան նորոգումներով ու բարեկարգութիւններով գեղեցկացաւ, թողունք ուրիշ մանր մունր շինութիւններն ու բարենորոգումները եւ անոր օրովը եկեղեցապատկան կալուածներու եւ վագֆներու շահնալը եւալին, միայն աս ըսեմ որ յիշեալ շինութեան համար ծախսած գրեթէ 2500 ոսկիէն 500ը անոր անձնական դրամէն էր, զոր զայսօր չէ վճարած իրեն եկեղեցին:

Երջանկայիշատակ Պօղոս Պետրոս ԺԱ. Էմմանուէլեան Կ. Պատրիարքը շնորհած էր Անոր Մայրազունութեան աստիճանը: Իսկ մեր Ամեն Գերբշանիկ Հոպեւոր Տէրը Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեան հաճեցաւ պատուել զանիկայ թագապրութեան պատուով, անոր քահանայութեան յիմնամեայ Յորեկեանին առթիւ և արդէն նոյն պատիւը շնորհող կոնպակը կարդացուեցաւ նոյն օրը Պատարագի ատեն, նախ հայերէնը եւ ապա անոր արաբերէն թարգմանութիւնը: Ամեն. Առաքելական Նուիրակը իրրեւ ընծայ նուիրեց անոր եպիսկոպոսական նոր թագ մը: Աստուած հրկար օրեր պարգեւէ մեր յարգելի ժողովրդապետին, որպէս զի ուրախութեամբ հովուէ Պաղտատու Հ. Կ. հասարակութիւնը, որ կը բաղկանայ կըր հաշուով 60 տնէ եւ 320 տնէ: Ամէն:

Ն. Ս.

ԱԶԴ

Արձագանցի պատ. բաժանորդներէն շատերը ստէպ կը ինդրեն որ կրկին անգամ զրկուին իրենց չտալայած թիւերը: Թերթիս տնօրէնութիւնը նկատելով որ առաքումները միշտ կանոնաւորապէս տեղի կ'ունենան, եւ ինք թիւերուն չհասնելուն պատասխանատու չի կրնար համարուիլ, եւ միանգամայն այսպիսի խնդրանքներու կատարման հետեւանքով ծանր ծախքերու կ'ենթարկուի, պարտք կը համարի ծանուցանել թէ այսուհետեւ անոնք որ չտալուած թիւերը կը փափաքին ունենալ, պէտք է որ թէ՛ նոյն թիւերուն գինը եւ թէ՛ անոնց առաքման ծախքը վճարեն:

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՒՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Եկեղեցին միշտ անաչառ օրէն դատաւարներ է եւ խորշիկ նկատեր է զանոնք որ ժողովանքները արտաքին ատենանի մէջ աշխարհական դատաւորներու դատաւարանին կ'ենթարկեն. և այսպիսիներու դէմ օրէնքներ և ծանր պատիժներ սահմաններ է: Պիոս Ժ. Արքայան Քահանայապետը իր 1911 Հոկտեմբեր 9 թուակիր աւագելական կոնգրակով նորոգելով և հաստատելով այս օրէնքներն ու պատիժները սապէս կը գրէ. «Ու եւ աշխարհական կամ կարգաւոր, այս կամ կին, որ եկեղեցական տնէրը, ոճրական կամ քաղաքական խնդրի համար, առանց եկեղեցական իշխանութեան հրամանին, աշխարհականներու ատենանք կը կոչէ, և հոն երթալու հրապարակաւ կը ստիպէ, կ'ենթարկուի վճռուած և մասնաւոր կերպով հռոմի Քահանայապետին վերապահուած բանադրանքի»:

Այս օրէնքին համեմատ Կարգինալայ ժողովը յանուանէ բանադրեց և իսպառ խորշիկ հրատարակեց Գանատացի Փիլիպպոս Յ. Կնամ քահանան որ աշխարհական նախագահ և բարձրագոյն ատենանքը քաշէր է Առաքելական Աթոռին նուիրակ Արքեպիսկոպոսը:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԽԱՆ.— Յունիս 6ին Ս. Առաքածածին տօնուանիստ եկեղեցւոյ մէջ

Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռաբոսեան Կ. Պատր. փոխանորդէն եկեղեցական աստիճաններ ընդունեցան Ս. Լուի կղերականէն հինգ աշակերտներ: Յովհաննէս աւագ-սարկաւագ Թոգաթիւան, բնիկ Էնկիւրցի, քահանայ ձեռնադրուեցաւ: Գէորգ կիսասարկաւագ Ագրապեան, բնիկ Մարաշցի, աւագ-սարկաւագութեան աստիճանը ընդունեցաւ: Իսկ Մկրտիչ Գալէղեան՝ Կարինցի, Պետրոս Տերաէրեան՝ Էնկիւրցի, Ազարիկ Գաւթիւան՝ Կ. Պոլսեցի խուզումն հերաց առին:

ԴԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Եւրակոյտը ձունիս 9ին հրապարակային նիստ գումարեց և զբաղեցաւ իր օրակարգին վրայ գտնուող խնդիրներով:

Ատենը բացուեցաւ ժամը 2. 30ին (Ը. Ե.) նախագահութեամբ Րիֆաթ պէյի նախորդ նիստի ատենագրութեան վաւերացումէն ետք՝ ձեռք առնուեցաւ այն օրինագիծը որուն ուժով մէկ անգամուան համար մաքսատուրքէ զերծ կը նկատուէին Հիճազի համար բերուելիք գործիքները, ևն. Այս մասին ուրիշ օրինագիծ մըն ալ գտնուելով, առաջինին նկատմամբ յետաձգուեցաւ:

Այս բեմ ելաւ Ելմատական նախարարութեան ընդհ. հաշիւներու ճիւղին պետ Ս. Էմ. Պէրպլերեան և անցեալ նիստին մէկ որոշման համաձայն, յանուն նախարարութեան բացատրութիւններ տուաւ զէնքի տակ գտնուող և պատերազմի զրկուած մուսիսիկ զինուորներու ընտանիքի իւրաքանչիւր անդամին տրուելիք ամսական 30 զըշի բաշխման եղանակին մասին: Պէրպլերեան էջ. բաւ թէ խնդրոյ առարկայ օրինագիծը արդէն գործադրուած լինցած է, այսու հանդերձ վերջին պատերազմի միջոցին ընտանիքի անգամները զացած իրենց զրամը առած են այն տեղերը ուր ամէն ամիս պաշտօնեաններու ամսականը կը բաշխուէր: Իսկ երբ նոր անհրաժեշտութիւն մը ծագի, Մարիէն որոշած է ասկէ ետք այդ 30ական զըշը «Թահսիլատը»ներու միջոցաւ գիւղերը զրկել և բաշխել ի ներկայութեան մուխթարներու և հօժաներու կամ քահանաներու:

Այս բացատրութիւնները Եւրակոյտին կողմէ բաւարար նկատուելով օրինագիծը վաւերացուեցաւ նոյնութեամբ:

Հետզհետէ վաւերացուեցան վերաւորեալներու համար զրկուելիք իրերէն մաքսատուրք չառնելու, Էտիքիէ մէջ «վեֆայէն» ֆերազ եղած շէնքերու պայմանաժամին տարի մը ևս տեւողութեան, Ափր. Տրիպլոյ ժողովուրդին յիսնեալ տուրքերուն ներման, Կարմիր Մահիկի և Կարմիր Խաչի անուանով գալիք նիւթերու մաքսատուրքէ զերծ նկատուելուն վերաբերող օրինագիծերը:

Ժողովը վերջացաւ ժամը 3ին (Ը. Ե.)

Յունաց Պատրիարքարանը փակել տուաւ յոյն

եկեղեցիները և գարոցները իրրեւ բողբ Յունաց դէմ գործուած արարքներուն:

Այս մասին կէս պաշտօնապէս հետեւեալը կը հաղորդուի.

«Ներքին գործոց նախարարին Ձօրու ուղեւորելէ եօր ինչպէս պատգովապէս ծանուցուեցաւ, Թրակիոյ մէջ Յոյներու գաղթումը զանազան պատճառներով շարունակեց, բազմաթիւ զանգացներու պատճառ եղաւ եւ գաղթումը Անատոլիոյ նահանգներուն մէջ ալ տարածուեցաւ: Ուստի կառավարութիւնն ամէն միջոց ձեռնառաւ գաղթումը արգիլելու համար եւ զինուորական խուլքեր դրկեց՝ քանի մը զինուորացիներէ յալածակուած արջառներ վերադարձներու համար: Յանցաւոր եւ անհոգ քանի մը պատգովապէս պատգովանկ եղան ու բացարձակ հրամաններ տուեցան իշխանութեանց, որպէս զի խնդիր մօտ գործադրեմ կառավարութեան հրահանգները, զիսկալով որ հակառակ պարագային պատգովանկ պիտի ըլլան: Մինչդեռ Պատրիարքարանը կը խոստովանէր թէ կառավարութեան հրամայած միջոցներուն հետեւանով կացութիւնը կը բարւոյն վերջին տեսք, իմացուեցաւ որ, Պատրիարքարանի ժողովները, անձամբ պատգովանկներով, սակայն գաղթումի խնդրին բերմամբ, որոշեց եւ փակել յունական եկեղեցիներն ու դպրոցները: Կառավարութիւնը կը շարունակէ արգիլել գաղթումը՝ նախապէս իր տուած հրահանգներուն համեմատ:»

— Յունական թերթերը կ'ըսեն թէ հելլէն գեապան Մ. Բանաս Եպարքոսին այցելելով տեսակցեցաւ թուրքահելլէն յարաբերութեանց մասին: Դեպքանքը Թուրքիոյ Յոյներուն կողմէ եղած գանդառները պարզեց Եպարքոսին, բնիկ զորայ կարգի գանդառներ երկու տէրութեանց մերձեցումին տարբար յարաբերութեանցը չեն ծառայել: Դեպքանքը նաեւ գանդառեցաւ թէ Յունաստանի թագաւորին տնտեսական տնտեսութեան օրն իւրիւր մէջ կուտակուին արգիլքեր եւ հելլէն զբօշներու պարգուելին և մետաղապրօններն մէջ կրօնական արարողութեան մը կատարուելը: Եպարքոսը պատասխանեց թէ Օսմ. կառավարութիւնը հելլէններուն դէմ յոռի նպատակ մը չունի և թէ եղած գանդառները թիւրիմացութեան արգիլքն են. նաեւ թէ կառավարութեան կողմէ ձեռք առնուած վճարական միջոցներու շնորհիւ ատենք ալ բոլորովին անհետացած են: Դաւով իւրիւր մէջ Յունաստանի թագաւորին տնտեսական տնտեսութեան հանդէսներուն արգիլքին, այդ ալ արգիլքն է իւրիւր կուտակուելն զրկուած հրահանգները ժամանակին անոր ձեռքը չհասնելուն:

— Սոքիա, 8 Յունիս. — Կէս օրէ ետք 15 հուլիսի չափ ժողովուրդ մը Մակեդոնիոյ արկածեալներուն առաջնորդութեամբ, յունական գարոցներն ու եկեղեցիները մտան: Յունաբէն արձանագրութիւնները վերցուեցան: Արօնական գիրքերը պահուեցան, եւ անոնց տեղ պուլկարական գիրքեր դրուեցան, կրօնա-

կան արարողութիւնները պուլկարներէն կարգացուեցան: Բոլոր եկեղեցիներն ու գարոցները զրաւուեցան Պուլկարներուն կողմէ: Հելլէն գեապանը բողոքեց այս վաճառական գործերուն դէմ և միեւնոյն ատեն զիմուներ կատարեց Ռուսական և Ֆրանսական գեապաններուն անոնց օժանդակութիւնը խնդրելու համար: Հակահելլէն շարժումը կը տարածուի նաեւ մասնաւոր հաստատութիւններու գէմը Յոյն սրճարան մը թաւանակեցաւ. ոստիկանութիւնը տնչօր է և յունական օգնութիւն կը խնդրէ: Վասի կայ թէ գեապանահելլէն մեծ ցոյցեր պիտի կատարուին:

*. Իշխան Վիտ սկսաւ հարկ եղած պատրաստութիւնները տեսնել՝ ապանացի ապստամբները նուաճելու համար:

— Ռուսիա ու Ֆրանսա վերջապէս խոստացան մասնակցել Տուրացիոյ առջև նաւային ցոյցին: Գերմանիա ալ հաւանած ըլլալով, ծանոյց Պերլինի իտալական գեապանին թէ պատրաստ է ընդունելու որ Ալպանիոյ խնդիրը միջազգային եղանակով կարգադրուի ծրագրին ալ ընդարձակուի:

— Ալպանական կառավարութիւնը վաւերացուցած ըլլալով Քորֆուի մէջ Եպիւրոսի կառավարութեան պատուիրակներուն հետ կնքուած համաձայնութիւնը, հակակշիւթ միջազգային յանձնաժողովին տեղափոխեց մօտեւ Քորֆու պիտի երթան, Եպիւրոսի վարչական կազմակերպութեան ծրագիրը գործադրելու համար:

— Աւստրիական թերթերը կը գրեն թէ Ռուսիա ու ժ կուտայ որ Լուի Պոնաբարդ իշխանը Ալպանիոյ դահաւն վրայ բարձրանայ: Պոնաբարդ իշխանը յայտարարած է թէ կ'ընդունի այդ առաջարկը, եթէ բոլոր տէրութիւնները համամիտ գտնուին: Իսկ ալպանացի ապստամբները մէկ բողոքածք մը միայն ունին, այն է Վիտ իշխանին Ալպանիայէն մեկնումը:

*. Աթէնքէն կը հեռագրեն թէ հելլէն կառավարութեան կողմէ ամերիկեան Իսաիօ և Միսիսիփի զրահաւորներուն գնման պայմանագրութիւնը կրնաքուելու վրայ է: Գինն է վաթսուէն միլիոն ֆր.: Ընդծովեայ մարտանաւեր և ծովային օդանաւեր ալ պիտի գնուին: Բոնիքանքին քաղաւոր մարտանաւն ալ իսկույն պիտի ապստամբի, երբ հանդանակութիւնները 20 միլիոն ֆրանքի հասնին. ցարդ 15 միլիոն հաւաքուած է:

*. Մ. Բուանդարէ ընդունեցաւ Մ. Տոււրքիի դահլիճին հրաժարականը: Մ. Բուանդարէ Երեսի. Ժողովին նախագահ Մ. Տէշանկիի առաջարկեց դահլիճը կազմելու պաշտօնը: Մ. Տէշանկի մեքեց:

— Մ. Տէքասէ հիւանդութեան պատճառաւ մեքեց դահլիճը կազմելու պաշտօնը: Մ. Ժան Տիւրիւի և Մ. Բէգրալ ևս մեքեցին: Մ. Բուանդարէ Մ. Ռիպոյի առաջարկեց նոր դահլիճը կազմելու պաշտօնը:

Մ. Ռիպո ծանոյց Մ. Բուանդարէի թէ պաշտօնապէս կ'ընդունի Դահլիճը կազմելու պաշտօնը:

— Մ. Ռիպո ծանոյց Մ. Բուանդարէի թէ ինք
յաջողած է դաշինք կազմել հետեւեալ կերպով.—
Մ. Ռիպո՝ վարչապետ և դատական նախարար, Մ.
Լէոն Պուստուա՝ արտաքին գործոց, Մ. Բէյթրալ՝
ներքին գործոց, Մ. Տէլքսէ՝ պատերազմական, Մ.
Շօթան՝ ծովային, Մ. Քլէմանթէլ՝ ելմտական, Մ.
Տարիաք՝ երկրագործական. Մ. Ժան Տիւրէյ՝ հանրո-
գուտ շինութեանց, Մ. Ռըվիլլ՝ առեւտրական ճար-
տարարութեան և թ. չ. չ., Մ. Տէսսոյ՝ կրթա-
կան և գեղարուեստից, Մ. Մօնուրի՝ աշխատանքի.
* * * Կ'ըսուի թէ Զօր. Քարանդա Մեքսիկայի
առ ժամեայ նախագահ հռչակել է ինքզինքն և իրեն
մայրաքաղաք ընտրել է Սաթիլլոն Զօր. Քարանդա
միեւնոյն տառն անհաշտ ընթացքի մը կը հետեւի
Նիակարա—Պօսի միջնորդներուն նկատմամբ և Զօր.
Վիլլա ղոժ կուտայ իրեն Եթէ այս լուրը հաստատ-
ուի, միջնորդները նոր դժուարութեանց պիտի հան-
դիպին, վասնզի քանի մը օրէ ի վեր կ'աշխատին յե-
ղափոխականներուն ճանչցնել տալու իրենց հեղինակու-
թիւնը, Ամերիկեան պատուիրակ Լամար այդ մասին
տեսակցեցաւ նապագահ Ուիլսոնի հետ։ Սակայն միջ-
նորդները կը պնդեն որ յեղափոխականները դադրե-
ցնեն թշնամութիւնէն բանակցութեանց ամբողջ տե-
ւողութեանը միջոցին, ասիկէ վերջը չի յաւաստելի որ
իրաւախոհութիւն մը կարենան առաջ բերել։
— Նիակարա Պօսի՝ Մ. Նահանգաց և Մեքսի-
կայի միջև հաշտութեան համար աշխատող պատուի-
րակները դադրեցուցն իրենց նիստերը։ Կը վախճուի
թէ միջնորդութեան գործը պիտի ձախողի՝ վերջիւ
Թամբլքօ զրկուած ըլլալուն համար ամերիկեան մար-
տանաւ մը, որ յեղափոխականներուն համար մեծա-
քանակ գէնք տարած էր։

* * * Պոլսոյ կուսակալութեանն.—

Զինուորական առժամեայ օրէնքին սրամարու-
քեանց համաձայն այն զինուորացուներ որոնք իրենց
երկիրը կը գտնուին և նախնական բնութիւնին կա-
տարելով վիճակ պիտի քաւեն, պարտաւոր են ներկա-

յանալ տեղական զինուորական յանձնաժողովներուն և
կատարել սալ իրենց բժշկական բնութիւնը, ինչպէս
նաեւ ծանօթութիւններ սալ իրենց քննանկան վիճակին
մասին. իսկ իրենց ծննդավայրէն դուրս գտնուողներն
ալ բնակած տեղերուն քաղապետութենէն ինքնութեան
գիր առնելով անոնցմով պէտք է ներկայանան այդ կող-
մերու զինուորական յանձնաժողովներուն՝ սալով ան-
հրաժեշտ տեղեկութիւնները։ Հիւանդ և չներկայանալու
չափ անկարող եղողները բժշկական վկայական պէտք
է ցոյց տան որ վաւերացուած ըլլայ տեղւոյն «Մէնիսի
Իխթիյարիէ»ներու կողմէ։ Անոնք որ այս բանաւոր
պատճառները չունենալով հանդերձ չեն ներկայացած
ու ապա ձեռք անցած են, այս կարգիները զենքի տակ
պիտի կանչուին և անոնցմէ մէկ ոսկիէն մինչեւ հինգ
ոսկի տուգանք պիտի առնուի։ Իրենց ընկերներուն զեն-
քի տակ կանչուելէն ետք բացը մնացողները նոյնպէս
զինուոր պիտի ըլլան և երեք տարի շնորհեանք ան-
խառնութեանց մէջ ծառայեցուցուելէ ետք երկու տարի
ալ զինուորական գործոց ծառայութիւն պիտի ընեն։
«Մուսեթէն»ի և վիճակարկութեան գործողութիւնները
Յուլիսի մէջ պիտի սկսին և մինչեւ Օգոստոսի 15ը
պիտի վերջանան. այս մասին անհրաժեշտ հրամանը
ստուած է հրամանատարութեանց։ Հետեւաբար կը ծա-
նուցուի 310ի ծնունդներուն որ, առանց ասեմ անցնե-
լու դիմեն և իրենց «մուսեթէն»ները կատարեն։

* * * Ելմտական նախարարութիւնը պատրաստեց
ցուցակ մը ուր նշանակուած են, 1327 տարուան հա-
շիւներուն նայելով, Պալքանիսի պետութեանց իւ-
րաքանչիւրին օսմանեան հանր պարտքերէն ունեցած
բաժինը։ Աւասիկ գումարները.— Պուլկարիա 4,075,500
ոսկի, Յուճապատան՝ 14,343,406, Սերպիա՝ 4 միլիոն
454,473, Սլաւոնիա՝ 1,099,683 և Սեւ Լեոն՝ 154,040.
Գոլմար 24,093,494 ոսկի։ Ցուցակէն յետոյ օրինակ
Ֆրանսա զրկուեցաւ, Բարիդի ելմտական ժողովին օ-
տար տէրութեանց պատուիրակներուն քաշխուելու
համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր և սկզբունքներ	369
Չավայր մարտիտ	372
Հին վաւերացումներ	373
Մեր պատմական	375
Եօթնեակ Քրիստոնէի	378
Խալիւսներու նախկին ստանին մէջ հայկական յարեւան մը	380
Տեղեկագրական	382

ԱՐՏՈՆԱՏԻՐ

ՅՈՎԼ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳՐԱԳԵՏ

ԳԵՂՈԳ Մ. Վ. ԹԵՂԵԴՊԱՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքաց համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. :— Արտաւան-
ման տար. 3ր. 10. վեցամս. 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՏէ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5 . Պայրաւ փողոց 5, 4 .
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւ
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատեղին:
4.— Ձեռագիրները եւ չեն դարձուիր: Յօդուածներու 5.—
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու զահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կովիթաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրաւ փ. 5: Տպարանս ըստմանայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Այլ տպուին ուսման տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէաներ,
մահազդներ, եւն. եւն.: Գիները անմեղելի կերպով աժան են: Գեղեցկադիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapesteste, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zittlau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy
Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'agréments simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.